Հավելված N 2
ՀՀ վարչապետի N 977 - Լ
որոշման

ԾՐԱԳԻՐ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N	**Նպատակը**	**Միջոցառումները**	**Ակնկալվող արդյունքը**	**Համակատարողը**	**Ժամկետը**
1.	Կարողություն-ների զարգացում	1.1. Տեխնիկական առաջադրանքների մշակման կարողությունների շարունակական զարգացման նպատակով կարիքների գնահատում և վերապատրաստման ծրագրերի իրականացում	Պատասխանատու ստորաբաժանումներն ունեն բավարար գիտելիքներ տեխնիկական առաջադրանք կազմելու համար	Պետական կառավարման համակարգի մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Շարունակական
		1.2. Պայմանագրերի կառավարման կարողությունների շարունակական զարգացման նպատակով կարիքների գնահատում և վերապատրաստման ծրագրերի իրականացում	Պատասխանատու ստորաբաժանումներն ունեն բավարար գիտելիքներ պայմանագրերի կառավարումն իրականացնելու համար: Պայմանագրերի կառավարման կարողությունների զարգացման արդյունքում հանրային ծառայությունների, ապրանքների և աշխատանքների փողի դիմաց արժեք հարաբերակցության բարելավում	Պետական կառավարման համակարգի մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Շարունակական
		1.3. Գնումների պլանավորման կարողությունների զարգացման նպատակով կարիքների գնահատում և	Նախագծանախահաշվային և (կամ) նախահաշվային և մրցույթի արդյունքում ձևավորված գնի տարբերության նվազեցում	Պետական կառավարման համակարգի մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Շարունակական

		վերապատրաստման ծրագրերի իրականացում			
		1.4. Գնումների մասնագետների վերապատրաստման իրականացում լիազորված մարմնի կողմից	Գնումների մասնագետների կողմից Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ֆինանսների նախարարություն ուղղվող պարզաբանումների քանակի և խորհրդատվական բնույթ կրող հարցադրումների նվազում		Շարունակական
		1.5. Դատավորների վերապատրաստում	Բողոքարկման գործընթացով սահմանված ժամկետներում տեղեկացված որոշումների կայացում	Դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	Շարունակական
		1.6. Գործարարների վերապատրաստում	Գնումների մասնակից կազմակերպությունների վերապատրաստում, այդ թվում՝ առցանց հարթակներում տեղեկատվական նյութերի և (կամ) հոլովակների տեղադրման միջոցով	Պետական կառավարման համակարգի մարմիններ, «Էնթերփրայզ Արմենիա» (Enterprise Armenia) (համաձայնությամբ)	Շարունակական
		1.7. Ղեկավար կազմի վերապատրաստում	Պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև հնարավորության դեպքում դրանց կառուցվածքում գործող առևտրային և ոչ առևտրային ընկերությունների ղեկավարներին և տեղակալներին գնումների գործընթացների կազմակերպման գործառույթներ իրականացնող միավորների իրավասությունների և պարտավորությունների հետ ծանոթացում, առցանց տեղեկատվության ստացման հնարավորությունների ներկայացում	Պետական կառավարման համակարգի մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	Շարունակական

			և գործընթացի ընթացքում ի հայտ եկող ռիսկերի կառավարման որակի բարձրացում		
2.	Տեղեկատվության հասանելիության աճի ապահովում	2.1. Հաճախ տրվող հարցեր և պատասխաններ՝ պատվիրատուների և մատակարարների համար	Գնումների պաշտոնական տեղեկագրում առանձին բաժնով հաճախ տրվող հարցերի և պարզաբանումների հրապարակում՝ հաճախ հանդիպող խնդիրների և դրանց լուծման տարբերակների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության աճ	Պետական կառավարման համակարգի մարմիններ, հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	Շարունակական
3.	ՀՀ ֆինանսների նախարարության դերի համապատասխանեցում առկա պահանջներին	3.1. Պետական կառավարման համակարգի մարմիններին խորհրդատվության տրամադրում՝ ռազմավարական նշանակություն ունեցող գնման ընթացակարգերի կազմակերպման դեպքում	Մարմինների ղեկավարների տեղակալների համար տեղեկատվության հասանելիության բարձրացման արդյունքում որոշումների կայացման արագության բարձրացում՝ գնումների գործընթացի առավել բարձր կառավարելիություն	Պետական կառավարման համակարգի մարմիններ	Շարունակական
		3.2. Շուկաների ուսումնասիրություն՝ կրկնվող գնումների համար	Առավել հաճախ իրականացվող 2 ապրանքատեսակի համար շուկայական ուսումնասիրությունների իրականացման արդյունքում գնումների պլանավորման որակի բարձրացում	ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ) ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ պետական եկամուտների կոմիտե	Շարունակական
		3.3. Համակարգային վերլուծությունների աջակցություն և իրականացում	Մրցութային, պլանավորման և պայմանագրերի կառավարման գործընթացների շարունակական ուսումնասիրությունների իրականացման արդյունքում՝ 1. ռիսկերի բացահայտում և կառավարում,	ՀՀ պետական վերահսկողական ծառայություն, ՀՀ հաշվեքննիչ պալատ (համաձայնությամբ), ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ (համաձայնությամբ)	Շարունակական

			2. արդյունավետության բարձրացում		
		3.4. Ակադեմիական կարողությունների ուղղորդում	Գիտական մտքի ուղղորդում դեպի համակարգի խնդիրների բացահայտումը և նորարարական լուծումների հայտնաբերումը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Շարունակական
		3.5 ՀՀ կառավարության ծրագրից բխող միջոցառումների և կապիտալ ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ զեկույցի պատրաստում՝ կիսամյակային	ՀՀ կառավարության ծրագրից բխող միջոցառումների և կապիտալ ծրագրերի իրականացման նպատակով գնման գործընթացների կազմակերպման վերաբերյալ զեկույցի նախապատրաստման արդյունքում առավել տեսանելի կդառնան տվյալ միջոցառմանն առնչվող ռիսկերը	Պետական կառավարման համակարգի մարմիններ	Շարունակական
4.	Թվայնացում	4.1. Թվային համակարգի տեխնիկական առաջադրանքի շրջանառություն և վերջնական հաստատում	էլեկտրոնային գնումների ժամանակակից, լիարժեք, բոլոր բիզնես գործընթացները ներառող, գնումների համակարգին առնչվող այլ համակարգերի հետ ինտեգրված նոր ազգային համակարգի ստեղծում՝ դրա տիրույթում ներառելով բոլոր պատվիրատուներին: Ընդ որում՝ համակարգը պետք է ներառի նաև հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերման և ապացուցման ավտոմատացված գործիքակազմ	Պետական կառավարման համակարգի մարմիններ, Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդ, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (համաձայնությամբ), Մրցակցության պաշտպանության հանձնաժողով (համաձայնությամբ)	2022 թ.
		4.2. Թվային համակարգի մշակման մրցութային գործընթացի մեկնարկ			2023 թ.
5.	Ստանդարտացում և կանաչ գնումներ	5.1. Կրկնվող գնումների ուղղորդող բնութագիրների սահմանում և պայմանագրի կառավարման ձեռնարկների մշակում	Ուղղորդող բնութագրերի սահմանում՝ համապատասխան պայմանագրի կառավարման ձեռնարկներով: Արդյունքում պայմանագրերի կառավարման	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	Շարունակական

			որակի բարձրացում, կրկնվող գնումների համար մարդ/ժամերի ծախսի կրճատում		
		5.2. Կանաչ գնումների սկզբնական ուսումնասիրության իրականացում	Կանաչ գնումների սահմանումների և արդյունքային չափանիշների ձևակերպման ու հստակեցման արդյունքում համակարգային քաղաքականության իրականացման հիմքի ստեղծում	Համաշխարհային բանկ (համաձայնությամբ), Ասիական զարգացման բանկ (համաձայնությամբ), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (համաձայնությամբ)	Շարունակական
6.	Համակարգի շարունակական թիրախային բարելավումներ	6.1. Կիսամյակային կտրվածքով գործարարների, հասարակական կազմակերպությունների և պատվիրատուների «խնդիրների, լուծումների և առաջարկությունների» զեկույցի պատրաստում	Գնումների համակարգի համապատասխանեցում արդի պահանջներին	Պետական կառավարման համակարգի մարմիններ	Շարունակական
		6.2. Մեկ անձից գնումների իրականացման համակարգի բարելավում՝ պատասխանատվությամբ հակակշռված ճկունության աճ	Համակարգի կանոնակարգված ճկունության մակարդակի բարձրացում՝ մարմինների ղեկավարների կողմից որոշումների կայացման լիազորությունների համապատասխանեցում պատասխանատվության մակարդակին		2022 թ.
		6.3. Ապրանքների գնման դեպքում հստակ պայմաններով տեխնիկական առաջադրանքների կազմում	Ապրանքների գնման դեպքում հղումներ օգտագործելիս պատվիրատուի կողմից որպես համարժեք ընդունելի համարվող ապրանքների ֆիրմային անվանումների, մոդելների և արտադրողների սահմանում		2022 թ.
		6.4. Բացառել գների նվազեցման նպատակով բանակցությունների	Մրցույթների և գնանշումների իրականացման դեպքում գների		2022 թ.

		վարումը, բացառությամբ, եթե հայտ ներկայացրել է մեկ մասնակից	նվազեցման նպատակով բանակցությունների վարման բացառում՝ առաջնային գնային առաջարկների արհեստական ուռճացումը և գների բացահայտումը կանխարգելելու համար		
		6.5. Գիտության բնագավառում գիտական հանրույթին հատկացվող դրամաշնորհային գործընթացի կանոնակարգում	Գիտության զարգման նպատակով միջազգային գործընկերների կողմից գիտնականներին դրամաշնորհի ձևով հատկացվող միջոցների հաշվին ձեռքբերումների գործընթացի կանոնակարգում	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, միջազգային գործընկերներ (համաձայնությամբ)	2022 թ.
		6.6. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից հաստատված գնումների համակարգի գնահատման մեթոդաբանության (MAPS) հիման վրա գնումների համակարգի գնահատում	Գնումների համակարգի գնահատում՝ իրավական համակարգի, ինստիտուցիոնալ կառավարման կարողությունների, շուկայի, թափանցիկության և պատասխանատվության ուղղություններով	Պետական կառավարման համակարգի մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2023 թ.
		6.7. Գնման գործընթացի մասնակիցների վարկանշավորում	Մասնակիցների վարկանիշավորման համակարգի ներդրում՝ հիմնված ոչ հայեցողական չափորոշիչների վրա	Պետական կառավարման համակարգի մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2023 թ.
		6.8. Մասնակիցների ծանրաբեռնվածության հանգամանքով պայմանավորված գնման պայմանագրերի ձախողման ռիսկերի նվազեցում	Գնման պայմանագրերի ձախողման դեպքերի ուսումնասիրության արդյունքներով մասնակիցների ծանրաբեռնվածությունը բացառող համակարգի ներդրում	Պետական կառավարման համակարգի մարմիններ	2023 թ.
		6.9. Գնումներում փողի դիմաց արժեքի ապահովման նպատակով ուսումնասիրությունների իրականացում	Փողի դիմաց արժեքի ուսումնասիրությունների իրականացման արդյունքում գնումների համակարգի հետագա զարգացման թիրախների մշակման	Համաշխարհային բանկ (համաձայնությամբ), Ասիական զարգացման բանկ (համաձայնությամբ), Վերակառուցման և զարգացման	Շարունակական

			հիմքերի ստեղծում, գնումների պլանավորման և տեխնիկական առաջադրանքների մշակման որակի աճ	եվրոպական բանկ (համաձայնությամբ)	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

25.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ